

# ՄԻՆՉԵՎ ԿԵՐՋԸ ԿՈՉՆՉԱՑՆԵԼ ԹՈՒՆԱՎՈՐ

## ՆՈՐ ԲԱՅԱԳԵՏԻ ԿՈՒՍՈՐԶԻ ԳԼԵՆՈՒՄԸ

Նոր Բայագետի կուսընկերության պլենումը լսեց ընկ. Գ. Սահակյանի գեկուցումը ՀԿ (բ) Կ Կենտկոմի պլենումի արդյունքների մասին: Պլենումը հավանություն տվեց ՀԿ (բ) Կ Կենտկոմի պլենումի բուրբ վորոշումներին:

Պլենումում յեկույթ ունեցան 36 ընկերներ: Նրանք երեսն յեկույթներում նշեցին, վոր շրջանի քաղաքական, տնտեսական, ինչպես նաև կուլտուրական դրոյթները չափից դուրս վատ ե:

Հայաստանի կուսակազմակերպության ղեկավարութան գլուխը տարիներ շարունակ, իրար փոխարինելով, կանգնած են յեղել հակահեղափոխականները, դաշնակցական, նացիոնալիստական-ֆաշիստական, տրոյկիստական տարրերը: Հայ ժողովրդի վոխերիմ թշնամիներ Հ. Ամատունին, Մ. Ակոպովը, Գուլոյանը, Մուղղուսին և մյուսները, շարունակելով նացիոնալիստ Խանջյանի քաղաքականութունը, ցանկանում եյին հայ ժողովրդին, հայ աշխատավորութանը թշնամութան հասցնել, քայքայել Հայաստանը քաղաքականապես, տնտեսապես ու կուլտուրապես: Այդ նրանց չհաջողվեց: Չհաջողվեց, վորովհետև մեծ Ստալինի սրատես աչքը միշտ հետևում եր հայ ժողովրդի, հայ աշխատավորութան վերածնունդին: Պլենումում յեկույթ ունեցող ընկերները համակիմ դասակարգային խորն ատելութամբ դեպի աշխատավորութան թշնամիները՝ բաղամաթիվ փաստերով ցույց տվեցին, թե ինչպես տարիներ շարունակ նրանց կամակարգողները կուլտուրական ուժերով, կուլանասութունների աճն արհեստականորեն դանդաղեցնելու, կուլտուրականները քայքայելու քաղաքականութուն են վարել:

Շրջանում չափազանց թույլ ե ընթացել պայքարը դասակարգային թշնամու դեմ: Դաշնակցականները, տրոյկիստները վոչ միայն չեն մեկուսացվել, այլ ընդհակառակը հովանավորվել են:

Պլենումը պահանջում ե Յերեվանի կուսակցական կազմակերպութուններից քննել Արմեն Անանյանի և Սամսոն Մարկոսյանի հարցերը, վտարել նրանց կուսակցության շարքերից:

Պլենումը միահամուռ կամք հայտնեց համախմբվելու Հայաստանի կուսակցական կազմակերպության նոր ղեկավարության շուրջը, ել ավելի սեղմ համախմբվելու աշխատավորության առաջնորդ մեծ Ստալինի շուրջը:

Պլենումը չր. ՄԱՐԳԱՐՅԱՆ

## ԱՊԱՐԱՆԻ ԿՈՒՍՈՐԶԻ ՊԼԵՆՈՒՄԸ

Սեպտեմբերի 28-ին կայացավ Ապարանի կուսընկերության պլենումը: Պլենումը լսեց շրջկոմի քարտուղար ընկ. Յաշա Մարտիրոսյանի հարցումը ՀԿ (բ) Կ Կենտկոմի արդյունքների մասին: Պլենումն առարգանքի սյունին դամեց ժողովրդի թշնամիներ՝ Ամատունուն, Ակոպովին, Մուղղուսուն, Գուլոյանին և մյուսներին:

Պլենումը կոնկերտ կերպով նշեց շրջանում, մասնավորապես անասնապահութան քննադատում յեղած մի շարք թերութունները: Այնուհասակ պլենումը խիստ քննադատութան յենթարկեց կուսընկերության բուրձրի և դատական մարմինների միանպամայն անհանդուրժելի վերաբերմունքը կուլտուրական վնասարարների դեմ պայքարելու գործին: Պլենումը նշեց նաև այն, վոր վճռական պայքար չի տարվում կոոպերացիայի ցանցում խցկված անհարգատ տարրերի դեմ, նրանցից կոոպերացիան մաքրելու ասպարիզում:

Պլենումն իր կազմից հեռացրեց

շրջգործկոմի նախագահ Մ. Սարգսյանին և հանձնարարեց սկզբնական կուսակազմակերպությանը քննելու նրա կուսակցականութան հարցը:

Այնուհետև պլենումում մի շարք փաստեր բերվեցին շրջանի խորհրդային աշխատանքի մեջ յեղած այլանդակութունների մասին: Ապից, թե ինչպես շրջգործկոմի նախկին նախագահ Խ. Փոշոյանը պայքար չեղ կազմակերպել տնտեսական և խրհրդային աշխատանքները բարելավելու ուղղութամբ, վորի հետևանքով անդերում կոպիտ կերպով վտանահարվել է դուրստնտեսական արտելի կանոնադրութունը: Վատ ե աշխատել նաև շրջգործկոմի հոգաբարձի վարիչ Մ. Հակոբյանը:

Պլենումը շրջանի կուսակազմակերպութունների ուշադրութունը սրեց ժողովրդի թշնամիների դեմ համար կերպով պայքարելու, նրանց ամեն տեղ հայտնաբերելու և մինչև վերջ ջախջախելու հարցերի վրա:

## ԲԱՍԱՐԳԵՉԱՐԻ ԹՐԶԿՈՍԻ ՊԼԵՆՈՒՄԸ

Սեպտեմբերի 28-ին բացվեց Բասարգեչարի կուսընկերության պլենումը: Պլենումը լսեց ընկ. Մ. Գանիելյանի գեկուցումը՝ ՀԿ (բ) Կ Կենտկոմի պլենումի արդյունքների մասին:

Մտքերի փոխանակութան ընթացքում վեր հանվեցին շրջանում դոյութուն ունեցող թերութունները:

Մերկացվեց շրջանի նախկին ժողդատավոր Վանիկ Հացադորդյանը, վորը յեղել ե ուսմավարական կուսակցութան անդամ և այդ փաստը խնամքով թաղցրել ե կուսակցութունից: Այդ հակահեղափոխական թախթրվուկն ուղտագործելով ժողովրդական դատավորի պատվավոր և պատասխանատու պոստը, շարունակ խախտել ե հեղափոխական որինականութունը, նպատակ ունենալով աշխատավորության մեջ դժգոհութուն սերմանել: Պլենումը դուրս շարքեց նրան կուսակցության շարքերից:

Պլենումը դիմակազերծ արեց և վր-

տարեց կուսակցութան շարքերից նաև կուսընկերության նախկին քարտուղար դաշնակցական-նացիոնալիստական թախթրուկ Գ. Գողթունուն, վորը հակահեղափոխական քայքայիչ աշխատանք կատարելով, զգալի վնաս ե հասցրել կուլտուրական ու տնտեսական շինարարութանը:

Յեկույթ ունեցող ընկերները նողկանքով եյին հիշատակում հայ ժողովրդի վոխերիմ թշնամիներին՝ Ամատունուն, Ակոպովին, Գուլոյանին, Մուղղուսուն և նրանց արքայականների անունները:

Պլենումը միահամուռ հավանութուն տվեց և անվերապահորեն միացավ ՀԿ (բ) Կ Կենտկոմի վերջին պլենումի վորոշումներին, վորոնք բղխում են աշխատավոր մարդկության իմաստուն առաջնորդ ընկ. Ստալինի հանձարեղ ցուցումներից:

ԲԱՅՐԱՄ ՈՎ